



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

9 հունիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով «ՄԻ. ԷՅ. ԱԲ. ԼԻԶ» ՍՊԸ-ի (տնօրեն Արթուր Մինասյան) անհատա-
կան դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝
«ՄԻ. ԷՅ. ԱԲ. ԼԻԶ» ՍՊԸ-ն 07.05.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝
խնդրելով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003.1 հոդվածը /2007թ. ապրիլի 9-ի խմբա-
գրությամբ/, 437-րդ եւ 438-րդ հոդվածները /իրավակիրատ պրակտիկայում դրանց տրված
մեկնաբանությամբ/ ճանաչել ՀՀ Սահմանադրության 31-րդ եւ 42-րդ հոդվածներին
հակասող եւ անվավեր:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթներն իրավակիրատ պրակտիկայում տրված
մեկնաբանությունների արդյունքում խախտում են անձի սեփականության իրավունքը,

քանի որ այս պարագայում առկա վիճահարույց խնդրի՝ ապահովագրական համակարգի եւ դրա իրավահարաբերությանն առնչվող ապահովագրական վճարների կատարման հիմքում ընկած է անձի սեփականության իրավունքը հանդիսացող ապահովագրական վճարի փոխհատուցման ակնկալիքը: Դիմողը նաեւ գտնում է, որ օրենսդրությունը եւ իրավակիրառական պրակտիկան պետք է նախատեսեն, թե պայմանագրի ազատության սկզբունքի դրսեւորումն ինչ ընդհանուր շրջանակներ պետք է ունենար, եւ ինչպես են դրանք հարաբերակցվում ապահովագրության վերաբերյալ իմպերատիվ նորմերի հետ:

Սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը, ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ գտնում է, որ սահմանադրական դատարանի կողմից գործի քննության ընդունումը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003.1 հոդվածի 1-ին մասի վերաբերյալ.

Դատական կազմն անհրաժեշտ է համարում նշել, որ սահմանադրական արդարադատություն հայցող անձը կարող է օգտվել ՀՀ Սահմանադրությամբ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ սահմանադրական դատարանի դիմելու իր իրավունքներից միայն նախատեսված վավերապայմանները բավարարելուց հետո, եւ այդ իրավունքի իրացման հնարավորությունը կարող է սահմանափակվել, ի թիվս այլնի, նաեւ այն դեպքում, երբ վիճարկվող դրույթ/ներ/ի վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի որոշում:

Դատական կազմը հարկ է համարում արձանագրել, որ սույն գործի շրջանակներում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003.1 հոդվածի 1-ին կետի սահմանադրականությունը «Ինգո Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը վիճարկել է ՀՀ սահմանադրական դատարանում եւ առկա է սահմանադրական դատարանի ՍԴՈ-975 որոշումը: Նշված որոշմամբ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ կողմերը չեն կարող օժտվել հայեցողությամբ պայմանագրի այն պայմանների

բովանդակությունը որոշելու հարցում, որի բովանդակությունն ամրագրված է օրենքի իմպերատիվ նորմով, կամ սահմանել օրենքի իմպերատիվ նորմով սահմանված պայմանին հակասող պայման: Ընդ որում, նման իրավակարգավորումը չի հակասում պայմանագրի ազատության սկզբունքին: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը, ըստ էության, կրկին առաջադրում է այն հարցը, որն արդեն իսկ լուծվել է սահմանադրական դատարանի նշյալ որոշմամբ: Հետեւաբար, առկա է գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմք:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1003.1 հոդվածի 2-րդ մասի եւ նույն օրենսգրքի 437-րդ եւ 438-րդ հոդվածների վերաբերյալ.

ա/ դիմումի եւ կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ: Հետեւաբար, դիմողի փաստարկներն ակնհայտ անհիմն են եւ սահմանադրաիրավական վեճ չեն առաջացնում: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009թ. նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որեւէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը, ինչն ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ. նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է,

բ/ դատական կազմը գտնում է, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետեւանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետեւաբար, խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողը փորձում է բարձրացնել դրանց կիրառման իրավաչափության հարց՝ այն քողարկելով խնդրո առարկա դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանած իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«ՄԻ. ԷՅ. ԱՐ. ԼԻԶ» ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը
մերժել:

Նախագահող

Անդամներ

9 հունիսի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/1-8